Արձանագրություն N 7

h. 78 հիմնական դպրոց 2020թ.

2020թ. սեպտեմբերի 10-ին կայացավ Երևանի <<Հայրապետ Հայրապետյանի>> անվան h.78 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման /հեռավար/խարհրդի հրթական նիստը: Նիստին մասնակցում էին խորհրդի 8 անդամները: Խորհրդակացական ձայնի իրավունքով նիստին մասնակցում էին դպրոցի գործադիր տնօրեն Ազնիվ Միրզոյանը և գլխավոր հաշվապահ Զենիկ Ղազարյանը:

Օրակարգում՝

1/Քննարկել 2020-2021 ուստարվա հաստիքացուցակը և տարիֆիկացիան: /Զեկուցող՝ Ա.Միրզոյան/

2/2020թ-ի 3-րդ եռանսյակի ֆինանսատնտեսական հաշվետվություն: / Զեկուցող՝ Զ.Ղազարյան/

3/Քննարկել 2020-2021 ուստարվա տարեկան ծախսային նախահաշվի նախագիծը, բյուջետային, ֆինանսավորման հայտը : /Զեկուցող՝ Ա.Միրզոյան/

4/ Քննարկել սոցիալապես անապահով աշակերտներին դասագրքերով ապահովելու հարցը: /Զեկուցող՝ Ա.Միրզոյան/

5/Քննարկել և հավանություն տալ կորոնավիրուսային հիվանդության վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ախտահանիչ նյութերի և սարքի գնման համար նախատեսված գումարներին: / Զեկուցող՝ Զ.Ղազարյան/

6/Քննարկել և հավանություն տալ դպրոցի աշխատակիցներ Հայկ Գևորգի Արշակյանին /ընթացիկ նորոգման բանվոր/ և Գայանե Արշավիրի Վարժապետյանին /վարչատնտեսական գծով փոխտնօրեն/ տալ միանվագ դրամական պարգևատրում յուրաքանչյուրին 130.000-ական ՀՀ դրամ, ամռան ընթացքում ներքին հարդարման, նորոգման աշխատանքներ կատարելու համար / զեկ. Զ.Ղազարյան/

7/Քննարկել կառավարման խորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը:

Լսեցին.

1/Կորոնավիրուսային հիվանդության վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ախտահանիչ նյութերի և սարքի գնման համար ծախված գումարները: Զեկուցող ներկայացրեց, թե կորոնավիրուսային հիվանդության վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ինչ նյութեր և սարքեր է ձեռք բերել դպրոցը /Զ. Ղազարյան/: Լսելով ներկայացրածը խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ և հաստատել ախտահանիչ նյութերի և սարքի գնման համար ծախսված գումարներին:

Լսեցին

2/2020-2021 ուստարվա հաստիքացուցակի և տարիֆիկացիայի հարցը: Հարցի մասին հաղորդեց գործադիր տնօրեն՝ Ա.Միրզոյանը: Ներկայացրեց, որ արձակուրդից վերադառնալով ուսուցիչները անցել են դասասենյակների կահավորման և ուղեցույցի աշակերտական նստարանների դասավորման աշխատանքներին:

Հաղորդողը կարևորեց, որ այս տարի աշակերտների թիվը 969 է, տարեվերջին ավարտել է իններորդ դասարանի 87 աշակերտ: Ուսուցիչների թիվը 55 է: Ելնելով կատարված դասաբաշխումից և հաստիքացուցակից, կազմվել է տարիֆիկացիոն ցուցակը, հաշվի առնելով ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը, շենք-շինության մակերեսն ու դասասենյակների քանակը: Նշվեց, որ այս ռուստարի կապված համավարակի հետ դպրոցն աշխատելու է երկհրթ՝. I-III դասարանները 13^{00}-17^{15}, իսկ IV-IX դասարանները՝ 8^{30}-12^{40}:

Հաղորդողը ներկայացրեց նաև տարիֆկացիոն ցուցակի հանձնաժողովի կազմը՝ 5 անդամով:

Տնօրեն՝ Ա.Միրզոյան

Գլխ. հաշվ.՝ Զ.Ղազարյան

Արհկոմի նախ.՝ Լ.Ղազարյան

Փոխտնօրեններ՝ Կ.Հախնազարովա

Մ.Համբարձումյան

Հավելեց, որ ուսուցիչներն ապահովված են դասաժամերով: Կան ուսուցիչներ, ովքեր ունեն մեկ դրույքից ավելի դասաժամեր: Կան նաև թոշակառու ուսուցիչներ: Նրանց հետ կնքվել է համաձայնագիր մեկ տարի աշխատանքային ժամկետով:

Ելնելով կատարված հաղորդումից,կառավարման խորհուրդը կարևորեց ապագա քաղաքացու զարգացման և կրթության կարևոր գործընթացը: Կատարված քննարկման արդյունքում խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ և վերադասի հաստատմանը ներկայացնել 2020-2021 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները:

Լսեցին

3/2020թ-ի III եռամսյակի ֆինանսատնտեսական հաշվետվության հարցի քննարկումը /զեկուցող.՝ Լ.Ղազարյան/:

Դպրոցի բյուջե է մուտքագրվել 2 տեսակի ֆինանսավորում՝ պետական բյուջեից ստանում ենք հիմնական դպրոցի ֆինանսավորումը և ներառական ծրագրից: Հաղորդողը ներկայացրեց դպրոցի ֆինանսավորման հիման վրա ըստ հավելվածների III եռամսյակում կատարված ածխատանքները, եկամուտները և ծախսված գումարները: Հաղորդողը կարևորեց, որ նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են օրենքով նախատեսված հաշվարկով, գերածախս չունենք, պարտք չունենք, ժամանակին կատարվել է սոցփաթեթի փոխանցումները, օրենքի սահմանում առանց ուշացումների ժամանակին վճարվել է աշխատողների արձակուրդային գումարները:Նախատեսված ֆինանսական միջոցները բավարարել են դպրոցի կարիքները հոգալու, կոմունալ և պարտադիր վճարումներն իրականացնելու, նախատեսված անհրաժեշտ տնտեսական և գրենական միջոցներ ձեռք բերելու համար:

Ընդհանուր առմամբ կառավարման խորհուրդը գոհ էր անթերի և նպատակային կատարված ֆինանսատնտեսական հաշվետվությունից և ելնելով կատարված հաղորդումից

Որոշեց

ա/ հավանություն տալ և հաստատել III եռամսյակում ֆինանսատնտեսական աշխատանքների կատարած հաշվետվությունը

բ/ հանձնարարել գործադիր տնօրենին և գլխավոր հաշվապահին շարունակել ֆինանսատնտեսական գործընթացն իրականացնել առանց թերությունների և բացթողումների:

Լսեցին

2020-2021 ուստարվա տարեկան ծախսային նախահաշվի նախագծի, բյուջետային, ֆինանսավորման հայտի քննարկման հարցը:/Զեկուցող՝ Ա.Միրզոյան/:Երևանի <<Հ.Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2020թ. բյուջեի՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի՝ նախնական տարբերակի քննարկման մասին հաղորդեց գործադիր տնօրեն Ազնիվ Միրզոյանը: Պլանավորվել և կազմվել է 2020թ. բյուջեի նախնական տարբերակը՝ հաշվի առնելով աշակերտների թվի աճը, ակնկալվող ֆինանսական ներհոսքը այլ աղբյուրներից: Հաղորդեց պարտադիր կատարման ենթակա ծախսերը՝ աշխատավարձի վճարում, կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ, այլ հոդվածներով նախատեսված ծախսեր: Ստեղծվել է հանձնաժողով, որը քննարկել է 2020թ. բյուջեի նախնական տարբերակը:

Կոլեգիալ կառավարման խորհուրդը ծանոթացավ 2020թ. բյուջեի նախնական տարբերակին, քննարկեց

Որոշեց

ա/ հավանություն տալ և հաստատել <<Երևանի Հ.Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 2020թ. բյուջեի նախնական տարբերակը:

բ/ Դպրոցի 2020թ. բյուջեի / եկամուտների և ծախսերի/ նախնական տարբերակը ներկայացնել վերադաս մարմնի հաստատմանը:

գ/ Իրականացնել վերահսկողություն բյուջեի կատարման գործընթացների նկատմամբ:

Լսեցին

Կառավարման խորհրդի նոր անդամի մասին հաղորդումը /զեկուցող՝ Մ.Համբարձումյան/: Հաղորդող ներկայացրեց, որ Լաուրա Մամիկոնի Հակոբյանը թոշակի անցնելու կապակցությամբ՝ իր դիմումի համաձայն դադարացրել է իր խորհրդի անդամի լիազորությունները: Մանկավարժական խորհրդի անդամների ընտրությամբ խորհրդի անդամ է ընտրվել Նառա Պետրոսի Բաղալյանը: Հիմք մանկավարժական խորհրդի N2 արտահերթ նիստը /25.9.2020թ./: Կառավարման խորհուրդը լսելով հաղորդումը

Որոշեց

Դիմել Երևանի քաղաքապետին՝ Երևանի <<Հ.Հայրապետյանի անվան հ.78 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կազմում փոփոխություն կատարելու համար:

Լսեցին

Սոցիալապես անապահով աշակերտների դասագրքերով ապահովելու հարցի քննարկումը /զեկուցող՝ Ա.Միրզոյան/: Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի 2020 թ. բյուջեի հաշվին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով նախատեսված հատկացումներից նվիրատվության ձևով ֆինանսական միջոցներ է տրամադրել 2020-2021 ուստարվա V-IX դասարանների սովորողներին:

Մանկավարժական խորհրդի նիստում որոշվել է և խորհրդի հավանությանն ու հաստատմանն է ներկայացվում տրամադրված գումարի սահմաններում դասագրքերի վարձավճարից ազատել V-IX դասարաններում սովորող անապահով, ներառական ծրագրում ընդգրկված աշակերտներին, ընդհանուր թվով 43 սովորող:

Ելնելով տնօրենի հաղորդումից, կառավարման խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ և հաստատել 2020-21 ուստարում դպրոցի V-IX դասարանների թվով 43 սոցիալապես անապահով, ներառական ծրագրում ընդգրկված սովորողներին դասագրքերի վարձավճարից ազատելու հարցը:

Լսեցին

Դպրոցի աշխատակիցներ Հայկ Գևորգի Արշակյանին և Գայանե Արշավիրի Վարժապետյանին ամռան ընթացքում հարդարման և նորոգման աշխատանքներ

կատարելու կապակցությամբ միանվագ դրամական պարգևատրում հատկացնելու հարցը /130.000-ական դրամ/:

Լսելով զեկուցողին կառավարման խորհուրդը

Որոշեց՝

Հավանություն տալ երկու աշխատակիցներին ամռան ընթացքում հարդարման ու նորոգման աշխատանքներ կատարելու կապակցությամբ միանվագ դրամական պարգևատրում հատկացնելուն:

Նիստի նախագահ՝ Մ.Համբարձումյան

Քարտուղար՝ Գ.Պետրոսյան